

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ  
(Հայարտոնագիր)



# **Արդյունաբերական սեփականություն**

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
**No 2 (14)**

Патентное управление Республики Армения  
(Армпатент)

**ПРОМЫШЛЕННАЯ  
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2000 թվականի հունիսի 22-ից

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                           |        |
|---------------------------------------------------------------------------|--------|
| ԳՅՈՒՏԵՐ .....                                                             | 5, 119 |
| Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....                             | 7, 121 |
| ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....                                                  | 73     |
| Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման<br>նշանների մասին ..... | 75     |
| ՑՈՒՑԻՉՆԵՐ .....                                                           | 107    |
| ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....                                                 | 111    |
| ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ .....                                                       | 139    |

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից 1995թ.   Издается Армпатентом с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3   375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3

Հեռ. 563-258 ընդհանուր բաժին   Тел. 563-258 общий отдел

Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին   Тел. 561-126 отдел информационных технологий

E-mail: [patent@arminco.com](mailto:patent@arminco.com)

**СОДЕРЖАНИЕ****CONTENTS**

|                                                                        |        |                                                            |
|------------------------------------------------------------------------|--------|------------------------------------------------------------|
| ИЗОБРЕТЕНИЯ                                                            | 5, 119 | INVENTIONS                                                 |
| Сведения о выданных патентах                                           | 7, 121 | Information on granted patents                             |
| ТОВАРНЫЕ ЗНАКИ                                                         | 73     | TRADE MARKS                                                |
| Сведения о зарегистрированных товарных<br>знаках и знаках обслуживания | 75     | Information on registered trade marks and service<br>marks |
| УКАЗАТЕЛИ                                                              | 107    | INDEXES                                                    |
| СООБЩЕНИЯ                                                              | 111    | REPORTS                                                    |
| ДВУБУКВЕННЫЕ КОДЫ                                                      | 139    | TWO-LETTER CODES                                           |

**ԳՅՈՒՏԵՐ**

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների  
նույնականացման միջազգային կոդերը  
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
- 13 փաստաթղթի տեսակի կոդը
  - A1 գյուտի արտոնագիր
  - A2 գյուտի ժամանակավոր արտոնագիր
  - B1 *ԽՍՀՄ կամ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ հանդիսացող պետության պաշտպանական փաստաթղթի հիման վրա տրված արտոնագիր*
  - B2 *նախապես ԴՀ ժամանակավոր արտոնագրով պաշտպանված գյուտի արտոնագիր*
- 21 հայտի համարը
- 22 հայտի ստացման թվականը
- 23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
- 24 թվականը, որից սկսվում է ԴՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
- 31 առաջնային հայտի համարը
- 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 46 հավակնության սահմանման հրապարակման թվականը
- 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 գյուտի անվանումը
- 57 գյուտի հավակնության սահմանումը
- 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 65 հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
- 71 հայտատու(ները), երկրի կոդը
- 72 գյուտի հեղինակը(ները), երկրի կոդը
- 73 արտոնագրատերը, հասցեն\*\*, երկրի կոդը
- 74 արտոնագրային հավատարմատար
- 76 հեղինակը, որը նաեւ հայտատու եւ արտոնագրատեր է, հասցեն\*\*, երկրի կոդը
- 86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- (\*) տվյալներ նախկին պաշտպանական այն փաստաթղթի մասին, որի հիման վրա տրվել է ԴՀ արտոնագիրը

---

\*\* ազգային արտոնագրատերերի դեպքում

### Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

|                              |                 |         |
|------------------------------|-----------------|---------|
| (51) <sup>6</sup> A01N 25/26 | (11) 789        | (13) A1 |
| (21) 000573                  | (22) 24.07.1995 |         |
| (31) 1.08/322, 679           | (32) 13.10.1994 | (33) US |
| 2.08/281 916                 | 27.07.1994      | US      |

(72) Ա. Ֆախրուդդին, US  
 (71) (73) Ամերիքըն Ցիանամիդ Քանփնի, US  
 (74) Է. Նահապետյան

**(54) Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութ, դրա ստացման եղանակներ եւ այն պարունակող բաղադրանյութ**

**(57) 1. Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութի ստացման եղանակ. *տարբերվում է*** նրանով, որ ներառում է հետեւյալ փուլերը.

ա) pH կախյալ պոլիմերի ջրային լուծույթի պատրաստում,

բ) pH կախյալ պոլիմերի ջրային լուծույթի pH-ի կարգավորում՝ հասցնելով այն մինչեւ այդ պոլիմերի լուծելիության pH-ը գերազանցող մեծության,

գ) պեստիցիդային ազդանյութի եւ անդրամանուշակագույն պաշտպանաշերտի ավելացում (բ) փուլի լուծույթին եւ խառնում՝ մինչեւ համասեռ սուսպենզիայի ստացումը,

դ) (գ) փուլի համասեռ սուսպենզիայի չորացում:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *տարբերվում է* նրանով, որ (ա) փուլում իրականացնում են pH կախյալ պոլիմերի եւ պլաստիկարարի ջրային խառնուրդի պատրաստում:

3. Եղանակն ըստ 1-ին եւ 2-րդ կետերի. *տարբերվում է* նրանով, որ (գ) փուլում լրացուցիչ իրականացնում են ստիլբենի միացության, եւ(կամ) մասնատող ազդանյութի, եւ(կամ) չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաշունությունը նվազեցնող) հավելանյութի ավելացում (բ) փուլի լուծույթին:

4. Եղանակն ըստ 1-3-րդ կետերի. *տարբերվում է* նրանով, որ լրացուցիչ (ե) փուլով իրականացնում են (դ) փուլի չոր արգասիքի մանրացում:

5. Եղանակն ըստ 1-4 կետերի. *տարբերվում է* նրանով, որ pH կախյալ պոլիմերն ընտրված է մեթակրիլաթթվի եւ մեթիլմեթակրիլատի համապոլիմերներից, մեթակրիլաթթվի եւ մեթակրիլատի համապոլիմերների խառնուրդից եւ մալեինի անհիդրիդի եւ ստիրոլի համապոլիմերից կազմված խմբից, պլաստիկարարն ընտրված է պոլիէթիլենգլիկոլից, պոլիպրոպիլենգլիկոլից, երկէթիլֆտալատից, երկբուտիլֆտալատից, կիտրոնաթթվի բարդ եթերից, գերչակի յուղից եւ եռացետինից կազմված խմբից, pH կարգավորիչը՝ հիմքն ընտրված է ամոնիումի հիդրօքսիդից, ալկալիական մետաղի հիդրօքսիդից եւ հողալկալիական մետաղի հիդրօքսիդից կազմված

խմբից, պեստիցիդային ազդանյութն իրենից ներկայացնում է միջատասպան ախտածին, անդրամանուշակագույն պաշտպանաշերտն ընտրված է մրից, բենզոֆենոնից, ներկանյութից եւ տիտանիումի երկօքսիդից կազմված խմբից, (բ) փուլի pH-ը հասցվում է 8,5-ից մինչեւ 10, մասնատող ազդանյութն ընտրված է պոլիցիկլային արոմատիկ միացությունների սուլֆացման արգասիքների եւ ֆորմալդեհիդի կոնդենսացման արգասիքների աղերից, հիդրոֆիլային օսլայից, կարբօքսիմեթիլցելուլոզից եւ պոլիվինիլալիբոլիդինից կազմված խմբից, իսկ չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաշունությունը նվազեցնող) հավելանյութն ընտրված է տալկից, մագնեզիումի ստեարատից, կալցիումի ստեարատից եւ կալցիումի սուլֆատից կազմված խմբից:

6. Եղանակն ըստ 5-րդ կետի. *տարբերվում է* նրանով, որ պլաստիկարարը 300-ից մինչեւ 1000 մոլեկուլային կշիռ ունեցող պոլիէթիլենգլիկոլ է, հիմքը ամոնիումի հիդրօքսիդ է, միջատասպան ախտածինը վիրուս է՝ ընտրված վայրի շերամի NPV, AcMNPV E2, AcMNPV L1, AcMNPV V8, V8vEGTDEL, V8vEGTDEL-AaIT եւ Heliothis zea NPV կազմված խմբից, մասնատող ազդանյութը նավթալինֆորմալդեհիդի կոնդենսատի նատրիումի սուլֆոնատ է, չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաշունությունը նվազեցնող) հավելանյութը տալկ է, իսկ թաղանթապատ պեստիցիդային ազդանյութի մասնիկների չափը 20մկմ-ից փոքր է:

**7. Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութի ստացման եղանակ. *տարբերվում է*** նրանով, որ ներառում է հետեւյալ փուլերը.

ա) pH կախյալ պոլիմերի, պեստիցիդային ազդանյութի եւ անդրամանուշակագույն պաշտպանաշերտի խառնուրդի պատրաստում օրգանական լուծիչում, որն ընտրված է այնպիսի խմբից, որը բաղկացած է ացետոնից, C<sub>1</sub>-C<sub>3</sub> սպիրտից եւ դրանց խառնուրդներից կազմված խմբից,

բ) ( ա)փուլի համասեռ սուսպենզիայի չորացում:

8. Եղանակն ըստ 7-րդ կետի. *տարբերվում է* նրանով, որ (ա) փուլում լրացուցիչ իրականացնում են պլաստիկարարի, եւ(կամ) ստիլբենի միացության, եւ(կամ) մասնատող ազդանյութի, եւ(կամ) չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաշունությունը նվազեցնող) հավելանյութի խառնուրդի պատրաստում օրգանական լուծիչում:

9. Եղանակն ըստ 7-րդ եւ 8-րդ կետերի. *տարբերվում է* նրանով, որ ( գ) փուլով իրականացնում են ( բ) փուլի չոր արգասիքի մանրացում:

10. Եղանակն ըստ 7- 9-րդ կետերի. *յարբերվում է* նրանով, որ օրգանական լուծիչն ացետոնի եւ C<sub>1</sub>-C<sub>3</sub> սպիրտի խառնուրդ է, ընդ որում, ացետոնի եւ C<sub>1</sub>-C<sub>3</sub> սպիրտի հարաբերակցությունները 1:9-ից մինչեւ 9:1 միջակայքում են:

11. Եղանակն ըստ 7- 9-րդ կետերի. *յարբերվում է* նրանով, որ pH- կախյալ պոլիմերն ընտրված է մեթակրիլաթթվի եւ մեթիլ մեթակրիլատի համապոլիմերներից, մեթակրիլաթթվի եւ մեթիլմեթակրիլատի համապոլիմերների խառնուրդից եւ մալեիմի անհիդրիդի եւ ստիրոլի համապոլիմերի խառնուրդից կազմված խմբից, պեստիցիդային ազդանյութ է միջատասպան ախտածինը, պլաստիկարարը ընտրված է պոլիէթիլենգլիկոլից, պոլիպրոպիլենգլիկոլից, երկէթիլֆտալատից, երկբուտիլֆտալատից, կիտրոնաթթվի բարդ եթերից, գերչակի յուղից եւ եռացետինից կազմված խմբից, անդրամանուշակագույն պաշտպանաչերտը ընտրված է մրից, բենզոֆենոնից, ներկանյութից եւ տիտանիումի երկօքսիդից կազմված խմբից, մասնատող ազդանյութը ընտրված է պոլիցիկլային արոմատիկ միացությունների սուլֆացման արգասիքների եւ ֆորմալդեհիդի կոնդենսացման արգասիքների աղերից, հիդրոֆիլային օսլայից, կարբօքսիմեթիլցելյուլոզից, պոլիվինիլպիրոլիդինից կազմված խմբից, չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաչունությունը նվազեցնող) հավելանյութը ընտրված է տակլից, մագնեզիումի ստեարատից, կալցիումի ստեարատից եւ կալցիումի սուլֆատից կազմված խմբից, իսկ C<sub>1</sub>-C<sub>3</sub> սպիրտն իրենից ներկայացնում է իզոպրոպանոլ:

12. **Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութ**, որը պարունակում է պեստիցիդային նյութից միջուկ՝ շրջապատված մատրիցով, որը ներառում է 2-ից մինչեւ 25 զանգվ.% pH կախյալ պոլիմեր, 5-ից մինչեւ 45 զանգվ.% անդրամանուշակագույն պաշտպանաչերտ:

13. Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութն ըստ 12-րդ կետի. *յարբերվում է* նրանով, որ միջուկը շրջապատող մատրիցը լրացուցիչ ներառում է մինչեւ 5 զանգվ.% պլաստիկարար, եւ(կամ) մինչեւ 75 զանգվ.% ստիրեոնի միացություն, եւ(կամ) մինչեւ 10 զանգվ.% մասնատող նյութ, եւ(կամ) մինչեւ 10 զանգվ.% չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաչունությունը նվազեցնող) հավելանյութ:

14. Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութն ըստ 12-րդ եւ 13-րդ կետերի, որտեղ պեստիցիդային ազդանյութի եւ մատրիցի հարաբերակցությունը 1:1-ից մինչեւ 1:10 միջակայքում է:

15. Թաղանթապատ պեստիցիդային ազդանյութն ըստ 12-րդ եւ 13-րդ կետերի, որտեղ պեստիցիդային ազդանյութ է միջատասպան ախտածինը, pH-կախյալ պոլիմերը ընտրված է մեթակրիլաթթվի եւ մեթիլ մեթակրիլատի համապոլիմերներից, մեթակրիլաթթվի եւ մեթիլմեթակրիլատի համապոլիմերների խառնուրդից եւ մալեիմի անհիդրիդի եւ ստիրոլի համապոլիմերի խառնուրդից կազմված խմբից, պլաս-


տիկարարը ընտրված է պոլիէթիլենգլիկոլից, պոլիպրոպիլենգլիկոլից, երկէթիլֆտալատից, երկբուտիլֆտալատից, կիտրոնաթթվի բարդ եթերից, գերչակի յուղից եւ եռացետինից կազմված խմբից, անդրամանուշակագույն պաշտպանաչերտը ընտրված է մրից, բենզոֆենոնից, ներկանյութից եւ տիտանիումի երկօքսիդից կազմված խմբից, մասնատող նյութը ընտրվում է պոլիցիկլային արոմատիկ միացությունների սուլֆացման արգասիքների եւ ֆորմալդեհիդի կոնդենսացման արգասիքների աղերից, հիդրոֆիլային օսլայից, կարբօքսիմեթիլցելյուլոզից, պոլիվինիլպիրոլիդինից կազմված խմբից, իսկ չոր արգասիքի հոսունությունը բարձրացնող (կաչունությունը նվազեցնող) հավելանյութը ընտրված է տակլից, մագնեզիումի ստեարատից, կալցիումի ստեարատից եւ կալցիումի սուլֆատից կազմված խմբից:

16. Թրջվող դեղափոշու ձեռով պեստիցիդային **բաղադրանյութ**, որը պարունակում է 2-ից մինչեւ 25 զանգվ.% խոնավարար , 2-ից մինչեւ 40 զանգվ.% մանրացնող ազդանյութ, 10-ից մինչեւ 70 զանգվ.% լցանյութ, 1-ից մինչեւ 10 զանգվ.% հոսունությունը բարձրացնող հավելանյութ եւ 5-ից մինչեւ 75 զանգվ.% թաղանթապատ պեստիցիդային ազդանյութ, որը պարունակում է պեստիցիդային նյութից միջուկ՝ շրջապատված ըստ 12-րդ եւ 13-րդ կետերում նշված բաղադրությամբ մատրիցով:

17. Թրջվող դեղափոշու ձեռով պեստիցիդային բաղադրանյութն ըստ 16-րդ կետի. *յարբերվում է* նրանով, որ պարունակում է մինչեւ 20 զանգվ.% pH-ը կարգավորող նյութ:

|                                                                                                                                                                                                                                                                                                            |                 |         |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------|---------|
| (51) <sup>6</sup> A01N 53/00                                                                                                                                                                                                                                                                               | (11) 790        | (13) A1 |
| A01N 25/10                                                                                                                                                                                                                                                                                                 |                 |         |
| A01N 25/12                                                                                                                                                                                                                                                                                                 |                 |         |
| (21) 96241                                                                                                                                                                                                                                                                                                 | (22) 06.04.1994 |         |
| (31) 93302792.2                                                                                                                                                                                                                                                                                            | (32) 08.04.1993 | (33) EP |
| (86) PCT/EP 94/01087,                                                                                                                                                                                                                                                                                      | 06.04.1994      |         |
| (72) Ռ. Բ. Հեմոնդ, Դ. Ջ. Ուեդդոք, GB                                                                                                                                                                                                                                                                       |                 |         |
| (71) (73) Շելլ Ինթերնեյշնլ Ռ-իսերչ Սաարսհափիյ Բ.Վ., NL                                                                                                                                                                                                                                                     |                 |         |
| (74) Հ. Դավթյան                                                                                                                                                                                                                                                                                            |                 |         |
| (54) <b>Պինդ խտանյութի կիրառումը ախտահարված օջախում ուտիճի դեմ պայքարելու համար</b>                                                                                                                                                                                                                        |                 |         |
| (57) 1. Ախտահարված օջախում ուտիճի դեմ պայքարելու եղանակ, ըստ որի օջախը պատում են պիրետրոիդային միջատասպան պարունակող խտանյութը ջրում տարաբաժանման միջոցով ստացված ջրային դիսպերսիայով. <i>յարբերվում է</i> նրանով, որ խտանյութը պինդ է եւ լրացուցիչ պարունակում է ավելի քան 50 զանգվ.% պոլիվինիլպիրոլիդոն: |                 |         |

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *յարբերվում է* նրանով, որ, որպես պիրետրոիդային միջատասպան, խտանյութը պարունակում է ընդհանուր բանաձեւ I-ի միացությունը




որտեղ


A-ն և B-ն հալոգենի ատոմ կամ մեթիլային խումբ են,

n-ը հավասար է 0,1-ի կամ 2-ի, m-ը հավասար է 0,1-ի կամ 2-ի,

R<sub>1</sub>-ը հանդիսանում է խումբ՝



որտեղ R<sub>2</sub>-ը և R<sub>3</sub>-ը ջրածնի ատոմ կամ հալոգենի ատոմ է կամ, ոչ պարտադիր, տեղակալված C<sub>1</sub>-C<sub>4</sub>-ալկիլային խումբ, կամ



խումբ, որտեղ

R<sub>4</sub>-ը ֆենիլային խումբ է, որը կարող է տեղակալվել մեկ կամ ավելի տեղակալիչներով, որոնք ընտրված են հալոգենի ատոմներից, կամ C<sub>1</sub>-C<sub>4</sub>-ալկիլային խմբից, C<sub>1</sub>-C<sub>4</sub>-ալկիլթիո-, C<sub>1</sub>-C<sub>4</sub>-ալկիլ-ալկոքսի-, նիտրո- և մեթիլենտերկօքսի- խմբերից:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ, որպես պիրետրոիդային միջատասպան, խտանյութը պարունակում է ալֆացիպերմետրին, դելտամետրին, ցիֆլուտրին և էսֆենվալերատ խմբից ընտրված միջատասպան:

4. Եղանակն ըստ 1-3-րդ կետերի. *փարբերվում է* նրանով, որ պինդ խտանյութը ստանում են պոլիվինիլպիրոլիդոնը և պիրետրոիդային միջատասպանը լուծելով լուծիչում, որում բավարար լուծելի են ինչպես պիրետրոիդային միջատասպանը, այնպես էլ պոլիվինիլպիրոլիդոնը, ստացված լուծույթից լուծիչի հետագա հեռացմամբ:

5. Եղանակն ըստ 1-3-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է* նրանով, որ պինդ խտանյութը ստանում են պիրետրոիդային միջատասպանի և

պոլիվինիլպիրոլիդոնի համատեղ արտամղմամբ, արտամղվածքի հետագա սառեցմամբ՝ մինչև փրկությունության առաջացումը, և ապա մանրացնում այն:

6. Պիրետրոիդային միջատասպան և ավելի քան 50 զանգվ. % պոլիվինիլպիրոլիդոն պարունակող պինդ խտանյութի կիրառումը ուտիճի դեմ պայքարելու համար օգտագործվող ջրային դիսպերսիայի ստացման համար:

7. Պիրետրոիդային միջատասպան և ավելի քան 50 զանգվ. % պոլիվինիլպիրոլիդոն պարունակող պինդ խտանյութը ջրում տարաբաժանելու միջոցով ստացված ջրային դիսպերսիայի կիրառումը ուտիճի դեմ պայքարելու համար:

(51)<sup>6</sup> **A23J 1/18** (11) **791** (13) **A2**  
**A12Q 1/02**  
**C12C 11/00**

(21) 99055

(22) 11.06.1999

(76) Լեոնիդ Հախումյան, Երևան, Հանրապետության 52, բն. 139, Կարինե Մանուկյան, Երևան, Հանրապետության 52, բն. 139, Ինգա Հախումյան, Երևան, Հանրապետության 52, բն. 139, Աննա Հախումյան, Երևան, Հանրապետության 52, բն. 139, AM

(54) (57)

**Մննդային վիտամինաամինաթթվային խտանյութի ստացման եղանակ**, որը ներառում է զինու կամ զարեջրի արտադրությունում օգտագործված մատվածքային խմորիչներից ջրային կախույթի պատրաստում, ապա այդ կախույթի տաքացում մինչև 45-48°C ջերմաստիճանը, ստացված ինքնատարրալուծվածքի հետագա տաքացում մինչև 90°C ջերմաստիճանը, սառեցում, հեղուկ ֆազի անջատում և վակուումի պայմաններում դրա խտացում կամ էթիլային սպիրտով կոնսերվացում. *փարբերվում է* նրանով, որ մատվածքային խմորիչները մախապես 3-4 ժամ լրացուցիչ պահում են քաղցուի մեջ, ընդ որում՝ զինու մատվածքային խմորիչը պահում են ածիկային, իսկ զարեջրինը՝ պտղային կամ հատապտղային քաղցուի մեջ:

(51)<sup>6</sup> **A23L 1/18** (11) **792** (13) **A1**  
(21) 000188 (22) 13.01.1994

(72) Ե. Օդինցովա, RU

(71) (73) «Գարնոնիա ի պրոգրես» բժշկակենսաբանական կոոպերատիվ, Մոսկվա, Վավիլովի 58, 3-րդ մասնաշենք, RU

(54) (57)

**Մննդային վիտամինային խտանյութի ստացման եղանակ**, ըստ որի զինու արտադրությունում օգտագործված և ջրում մախապես լուծված խմորիչ-

ները ինքնատարրալուծում են, ստացված ինքնատարրալուծվածքը տաքացնում, հեղուկ ֆազը անջատում եւ ապա վակուումի պայմաններում խտացնում. *փարբերվում է* նրանով, որ խմորիչները լրացուցիչ լվանում են ջրում 1:3 հարաբերակցությամբ, ապա լուծում ջրում 1:1,5 հարաբերակցությամբ, ընդ որում խմորիչների ինքնատարրալուծումը կատարում են 30-36 ժամվա ընթացքում 45-48°C ջերմաստիճանում, իսկ ինքնատարրալուծվածքի խտացված հեղուկ ֆազը հարստացնում B խմբի վիտամիններով:

(51)<sup>6</sup> **A23L 2/00** (11) **793** (13) **A2**  
 (21) 99024 (22) 09.03.1999  
 (76) Ռոզա Մադոյան, Երեւան, Վաղարշյան 20/1, բն. 40, Յուրիկ Կարապետյան, Երեւան, Վաղարշյան 16, բն. 4, AM  
 (54) (57)

**Հանքային ջուր.** *փարբերվում է* նրանով, որ այն լրացուցիչ պարունակում է Lactobacillus acidophilus-ի կուլտուրալ հեղուկ՝ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (ծավալ.%)

|                          |             |
|--------------------------|-------------|
| <i>հանքային ջուր</i>     | 99,94-99,98 |
| <i>կուլտուրալ հեղուկ</i> | 0,02-0,06:  |

(51)<sup>6</sup> **A23N 12/08** (11) **794** (13) **A2**  
 (21) 98048 (22) 11.06.1998  
 (76) Լեւոն Աբրահամյան, Երեւան, Խորենացու 29, բն. 67, AM  
 (54) (57)

1. **Սննդամթերքի չորացման պահարան,** որն ունի երկու կողմնային, հետեւի եւ առջեւի պատերով սահմանափակված չորացման խցիկ, որի դուռն ամրացված է առջեւի պատին, դուրսբաշտվի հարթ կրիչներ սննդամթերքի տեղադրման համար, որոնք տեղակայված են ըստ բարձրության շախմատածեւ եւ մի եզրով փոխ առ փոխ հավում են հետեւի պատին՝ առաջացնելով բացակ առջեւի պատի հետ, եւ առջեւի պատին՝ առաջացնելով բացակ հետեւի պատի հետ, էլեկտրական ջեռուցիչներ, էլեկտրական օդափոխիչ, օդի ներմուծման եւ արտածման օդատարներ. *փարբերվում է* նրանով, որ բացակներում տեղակայված են էլեկտրական ջեռուցիչներ:

2. Պահարանն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ հարակից կրիչների միջեւ տեղադրված են լրացուցիչ կրիչներ՝ հետեւի եւ առջեւի պատերի հետ բացակներով:

3. Պահարանն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով որ այն ստորին մասում ունի ջերմափոխանակման խցիկ, որը կապված է չորացման խցիկի

վերնամասի հետ պահարանի կողմնային պատերի մեջ տեղադրված օդատարների միջոցով:

(51)<sup>6</sup> **A61B 5/02** (11) **795** (13) **A2**  
 (21) 99013 (22) 12.02.1999  
 (76) Ռաֆայել Ստամբոլցյան, Երեւան, Ջրաշատ 50, բն. 7, Ռուզաննա Մայրապետյան, Երեւան, Ավետիսյան 1, բն. 24, Վազգեն Բալասանյան, Երեւան, Պուշկինի 50, բն. 7, Բորիս Բարսամյան, Երեւան, Հալաբյան 38, բն. 2, AM  
 (54) (57)

**Էլեկտրասրտաշոշափիչ,** որն ունի դրական, բացասական եւ չեզոք էլեկտրոդներ. *փարբերվում է* նրանով, որ էլեկտրոդները տեղակայված են ընդհանուր հիմքի վրա, բաժանված են միմյանցից մեկուսացնող շերտերով, ընդ որում չեզոք էլեկտրոդը գտնվում է բացասական եւ դրական էլեկտրոդների միջեւ:

(51)<sup>6</sup> **A61B 5/04** (11) **796** (13) **A2**  
**A61B 5/0472**  
 (21) 99102 (22) 04.10.1999  
 (72) Կ. Ադամյան, Ա. Աստվածատրյան, Ա. Չիլինգարյան, AM  
 (71) (73) Արմեն Աստվածատրյան, Երեւան, Պուշկինի 31, բն. 11, AM  
 (74) Հ. Մանուկյան  
 (54) (57)

1. **Սրտի իշեմիկ հիվանդության ախտորոշման եղանակ,** ըստ որի հիվանդին ենթարկում են հեծանվաէրգաչափական բեռնվածության եւ գրանցում նրա էլեկտրասրտագիրը. *փարբերվում է* նրանով, որ էլեկտրասրտագիրը գրանցելուց առնվազն 24 ժամ հետո հիվանդին ներարկում են ֆլեկահինիդ եւ մոտավորապես 30 րոպե անց ենթարկում լրացուցիչ հեծանվաէրգաչափական բեռնվածության, կրկին գրանցում էլեկտրասրտագիրը եւ դրա վրա չափում QRS-համալիրի լայնությունը, եւ եթե սկզբնականի համեմատ QRS-համալիրի լայնությունը գերազանցում է 25 %-ով, արձանագրում են հիվանդության առկայությունը:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ ֆլեկահինիդը ներարկում են per os 200-ից մինչեւ 400 մգ՝ հիվանդի 1 կգ կշռի հաշվարկով:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ ֆլեկահինիդը ներարկում են ներերակային 2-ից մինչեւ 4 մգ՝ հիվանդի 1 կգ կշռի հաշվարկով:

(51)<sup>6</sup> **A61B 6/12** (11) **797** (13) **A2**  
 (21) 99050 (22) 31.05.1999  
 (72) Հ. Հարությունյան, Կ. Հարությունյան, AM

(71) (73) Հեկտոր Հարությունյան, Երևան, Արաբկիրի 21 փ. 1, բն. 44, AM

(54) (57)

**Կենդանիների մարմնում մետաղական առարկաների հայտնաբերման սարք**, որն ունի ցածր հաճախականության գեներատոր, տվիչ՝ ինդուկտիվ երեք կոճերով, որոնցից մեկը T-աձև միջուկով գեներատորային կոճն է, իսկ մյուս երկուսը ընդունիչ կոճեր են, որոնք ազդագերծիչի միջոցով միացված են ուժեղացուցիչի մուտքին, որի ելքը միացված է ինդուկտորին. *Գրաբերվում է* նրանով, որ տվիչի ընդունիչ կոճերն ունեն Γ-աձև միջուկներ, տեղակայված են գեներատորային կոճի նկատմամբ հավասարահեռ, ընդ որում սարքը միակառույց է եւ տեղադրված է ընդհանուր իրանում:

(51)<sup>6</sup> **A61C 8/00** (11) **798** (13) **A2**  
(21) 99076 (22) 02.08.1999

(76) Կարեն Գրիգորյան, Երևան, Վարդանանց 5ա, բն. 352, AM

(54) (57)

**Ատամի իմպլանտատ**, որն ունի կենտրոնական անցքով եւ արտաքին պարուրակով հենաականոց, որի մի ծայրը կատարված է արտաքին ցանցի ձեւով, հենաականոցի անցքով անցնող ձող, որի պարուրակին ներպտուտակված են մանեկ եւ ատամի շապիկային մասի ամրակցման կճատ. *Գրաբերվում է* նրանով, որ հենաականոցի մյուս՝ դեպի կճատն ուղղված ծայրը կատարված է արտաքին ցանցի ձեւով, իսկ մանեկն ունի հատած կոնի ձև ունեցող մաս, որը փոխազդում է այդ ցանցի հետ:

(51)<sup>6</sup> **A61C 8/00** (11) **799** (13) **A2**  
(21) 99077 (22) 02.08.1999

(76) Կարեն Գրիգորյան, Երևան, Վարդանանց 5ա, բն. 352, AM

(54) (57)

**Ատամի իմպլանտատ**, որն ունի կենտրոնական անցքով եւ արտաքին պարուրակով հենաականոց, որի մի ծայրը կատարված է արտաքին ցանցի ձեւով, հենաականոցի անցքով անցնող ձող, որի պարուրակին ներպտուտակված են մանեկ եւ ատամի շապիկային մասի ամրակցման կճատ. *Գրաբերվում է* նրանով, որ ցանցի հակադիր մասում հենաականոցն ունի ձողի գլխիկի կտրվածքի պրոֆիլին համապատասխան պրոֆիլով բնիկ, իսկ մանեկն ունի հատած կոնի ձև ունեցող մաս, որը փոխազդում է ցանցի հետ:

(51)<sup>6</sup> **A61D 1/16** (11) **800** (13) **A2**  
(21) 99108 (22) 18.10.1999

(72) Հ. Հարությունյան, AM

(71) (73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երևան, Տերյան 74, AM

(54) (57)

**Մագնիսական քակարդ**, որը պատրաստված է երկայնական ճոռեր ունեցող, օքսիդային մագնիսական նյութից քառաբեւեռ չորսուի ձեւով եւ որի բեւեռները տեղակայված են ըստ երկարության. *Գրաբերվում է* նրանով, որ չորսուն պատրաստված է երկու մագնիսից, որոնք կիպ մոտեցված են տարանուն բեւեռներով եւ ամրացված են երկու զուգահեռ մագնիսաթափանց թիթեղների միջեւ, որոնց լայնությունը գերազանցում է չորսուի լայնությանը:

(51)<sup>6</sup> **A61F 1/00** (11) **801** (13) **A2**  
(21) 97061 (22) 18.07.1997

(72) Ա. Մալայան, Ա. Հովսեփյան, AM

(71) (73) Ալեքսանդր Մալայան, Երևան, Պուշկինի 40, բն. 92, AM

(54) (57)

1. **Դեփատոմետր**, որն ունի շրջանակ եւ շրջանակի վրա տեղադրված պրիզմաներ. *Գրաբերվում է* նրանով, որ պրիզմաները կազմված են առջեւի եւ հետեւի ապակիներից, որոնց միջեւ հպումով տեղավորված է հեղուկով լցված թափանցիկ առածակալան պարկ, ընդ որում յուրաքանչյուր առջեւի ապակին ունի դիրքի կարգավորիչ՝ օպտիկական պարամետրերը կարգավորելու համար:

2. Դեփատոմետրն ըստ 1-ին կետի. *Գրաբերվում է* նրանով, որ դիրքի կարգավորիչն իրականացված է ապակու բռնիչի ձեւով, որն ունի առանցքային պտույտի եւ հետեւի ապակու նկատմամբ թեքման հնարավորությամբ զնդային հենարան:

3. Դեփատոմետրն ըստ 2-րդ կետի. *Գրաբերվում է* նրանով, որ դիրքի կարգավորիչն ունի առանցքային պտույտի չափման եւ հետեւի ապակու նկատմամբ թեքման չափման սանդղակներ:

(51)<sup>6</sup> **A61F 2/06** (11) **802** (13) **A1**  
**A61M 29/02**

(21) 97097 (22) 26.04.1995

(86) PCT/US 95/05095, 26.04.1995

(72) Գ. Փինչասիկ, Յա. Ռիխտեր, IL

(71) (73) Սեդիկոլ ԼԹԳ., IL

(74) Հ. Դավթյան

(54) **Հողավոր ստենտի հարեւան սեգմենտների հարեւան հատվածամասերը միացնող տարր եւ հողավոր ստենտ (դրա տարբերակները)**

(57) 1. **Հողավոր ստենտի հարեւան սեգմենտների հարեւան հատվածամասերը միացնող տարր**, որն ունի բազմաթիվ ճկուն օղակներ. *Գրաբերվում է* նրանով, որ օղակներից յուրաքանչյուրն ունի բազ-

մաթիվ մասեր, ընդ որում մասերի յուրաքանչյուր զույգն ունի իրենց միջև գտնվող ծռման տիրույթ:

2. Միացնող տարրն ըստ 1-ին կետի. *փարբերվում է* նրանով, որ ստենտի ընդարձակման ժամանակ յուրաքանչյուր ճկուն օղակի նշված ծռման տիրույթը մնում է ծռված:

3. **Հողավոր ստենտ**, որն ունի բազմաթիվ ճկուն օղակներ ունեցող ճկուն միացնող տարբերով միացված կոշտ սեգմենտներ, որոնք կազմված են միմյանց միացված գազաթներով բազմաթիվ բջիջներից. *փարբերվում է* նրանով, որ ճկուն օղակները կապված են հարեւան սեգմենտների բջիջների գազաթներին եւ ունեն բազմաթիվ մասեր, հարեւան մասերի յուրաքանչյուր զույգն ունի իրենց միջև գտնվող ծռման տիրույթ, ընդ որում ստենտի ընդարձակման ժամանակ սեգմենտներից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է սկզբունքորեն գլանակաւ աղամանդային ցանց, իսկ ճկուն օղակի նշված ծռման տիրույթը մնում է ծռված:

4. Ստենտն ըստ 3-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված ճկուն օղակների քանակը 8-ից 24 է:

5. Ստենտն ըստ 3-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ պատրաստված է կենսահամատեղելի նյութից, որն առավել ունակ է պլաստիկ, քան էլաստիկ դեֆորմացման:

6. Ստենտն ըստ 5-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված նյութը չժանգոտվող պողպատ է:

7. Ստենտն ըստ 5-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված նյութը ոսկի է:

8. Ստենտն ըստ 5-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված նյութը տանտալ է:

9. Ընդարձակելի հողավոր ստենտի էպպես խողովակաձեւ եւ էպպես կոշտ հարեւան սեգմենտները միացնող տարր, որն ունի ճկուն օղակ. *փարբերվում է* նրանով, որ ճկուն օղակն ունի առնվազն առաջին եւ երկրորդ մասեր եւ դրանց միջև գտնվող ծռման տիրույթ:

10. Միացնող տարրն ըստ 9-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ստենտի ընդարձակման ժամանակ նշված ծռման տիրույթը մնում է ծռված:

11. Միացնող տարրն ըստ 9-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված մասերն ունեն տարբեր երկարություններ, ընդ որում նշված մասերից երկարի երկարությունն ավելի մեծ չէ, քան կարճի երկարության կրկնապատիկը:

12. Միացնող տարրն ըստ 1-ին կամ 9-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ստենտի ընդարձակման ժամանակ նշված ծռման տիրույթն ունի մեծանալու հնարավորություն:

13. Միացնող տարրն ըստ 9-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված մասերը հիմնականում ուղիղ են:

14. Ընդարձակելի **հողավոր ստենտի** էպպես խողովակաձեւ եւ էպպես կոշտ **հարեւան սեգմենտները միացնող տարր**, որն ունի ճկուն օղակ. *փարբերվում է* նրանով, որ օղակն ունի առնվազն ա-

ռաջին, երկրորդ եւ երրորդ մասեր, առաջին ծռման տիրույթ, որը գտնվում է առաջին եւ երկրորդ մասերի միջև, եւ երկրորդ ծռման տիրույթ, որը գտնվում է երկրորդ եւ երրորդ մասերի միջև:

15. Միացնող տարրն ըստ 14-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված առաջին ծռման տիրույթը եւ երկրորդ ծռման տիրույթը ստենտի ընդարձակման ժամանակ մնում են ծռված:

16. Միացնող տարրն ըստ 14-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված մասերն ունեն տարբեր երկարություններ, ընդ որում նշված մասերից երկարի երկարությունն ավելի մեծ չէ, քան կարճի երկարության կրկնապատիկը:

17. Միացնող տարրն ըստ 14-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ստենտի ընդարձակման ժամանակ նշված առաջին ծռման տիրույթը եւ երկրորդ ծռման տիրույթն ունեն մեծանալու հնարավորություն:

18. Միացնող տարրն ըստ 14-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված մասերը հիմնականում ուղիղ են:

19. Ընդարձակելի **հողավոր ստենտի սեգմենտները միացնող տարր**, որն ունի ճկուն օղակ. *փարբերվում է* նրանով, որ օղակն ունի առաջին, երկրորդ եւ երրորդ մասեր, ծռման տիրույթ, որը գտնվում է նշված մասերից յուրաքանչյուր զույգի միջև, ընդ որում նշված ծռման տիրույթները միմյանց էպպես հակադիր են դասավորված:

20. Միացնող տարրն ըստ 19-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ստենտի ընդարձակման ժամանակ նշված ծռման տիրույթներն ունեն մեծանալու հնարավորություն:

21. Ընդարձակելի **հողավոր ստենտ**, որն ունի երկայնական առանցք եւ մակերեսութամբ՝ առանցք, էպպես խողովակաձեւ եւ էպպես կոշտ բազմաթիվ սեգմենտներ, որոնք որոշում են երկայնական անցք, եւ հարեւան սեգմենտները միացնող ճկուն տարր, որն ունի բազմաթիվ ճկուն օղակներ. *փարբերվում է* նրանով, որ օղակներից յուրաքանչյուրն ունի առաջին եւ երկրորդ մասեր եւ ծռման տիրույթ, որը գտնվում է նշված մասերի միջև:

22. Ստենտն ըստ 21-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ճկուն օղակներից յուրաքանչյուրը տեղակայված է նշված բազմաթիվ սեգմենտների միջև եւ միացնում է դրանք:

23. Ստենտն ըստ 22-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ճկուն օղակներն ունեն ծայրային կետեր, որոնցով միացված են սեգմենտներին:

24. Ստենտն ըստ 23-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ ճկուն օղակների ծայրային կետերը մեկ գծով են դասավորված երկայնական անցքի հետ:

25. Ստենտն ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *փարբերվում է* նրանով, որ նշված ճկուն օղակներն այնպես են հարմարեցված, որ էպպես փոխհատուցում են նշված սեգմենտների կարճանալու հակումը նշված ստենտի ընդարձակման ժամանակ:

26. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ստեփանոս ընդարձակման համար օգտագործվող փչովի բալոնը տեղավորված է նշված երկայնական անցքի մեջ:

27. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ճկուն օղակներն ունեն բացվելու եւ երկայնական ուղղությամբ երկարելու հնարավորություն՝ փոխհատուցելով միացած սեզմենտների հարեւան ծայրերի՝ երկայնական շարժումով միմյանցից հեռանալը, երբ ստեփանոս ընդարձակվում է:

28. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ սեզմենտներն ունեն միմյանց նկատմամբ պտտմանը չձգտելու հատկություն, երբ ստեփանոս ընդարձակվում է:

29. Ստեփանոս ըստ 28-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ նշված օղակների եւ նշված սեզմենտների հողակապում ուժի սկզբունքորեն ոչ մի բաղադրիչ չի գործում նշված օղակներից ստեփանոսի մակերեսներում առանցքի ուղղությամբ նշված ստեփանոսի ընդարձակման ժամանակ:

30. Ստեփանոս ըստ 28-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ նշված օղակների եւ նշված սեզմենտների հողակապում ուժի սկզբունքորեն ոչ մի բաղադրիչ չի գործում նշված օղակներից նշված երկայնական անցքի նշված երկայնական առանցքի նկատմամբ շառավղային ուղղությամբ նշված ստեփանոսի ընդարձակման ժամանակ:

31. Ստեփանոս ըստ 30-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ նշված օղակների եւ նշված սեզմենտների հողակապում ուժի միակ բաղադրիչը գործում է նշված օղակների սկզբունքորեն երկայնական ուղղությամբ նշված ստեփանոսի ընդարձակման ժամանակ:

32. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ճկուն օղակներն ունեն ստեփանոսի երկայնական անցքի մեջ կամ նրանից դուրս ցցվելուն չձգտելու հատկություն, երբ ստեփանոս ընդարձակվում է:

33. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ճկուն օղակներն ունեն ստեփանոսի երկայնական անցքի մեջ կամ նրանից դուրս ցցվելուն չձգտելու հատկություն, երբ ստեփանոս ճկվում է:

34. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ճկուն օղակներից յուրաքանչյուրն ունի առաջին ծայր եւ երկրորդ ծայր, ծոման նշված տիրույթը գտնվում է նշված առաջին ծայրի եւ նշված երկրորդ ծայրի միջև, եւ նշված ծոման տիրույթն ունի նշված առաջին ծայրի եւ նշված երկրորդ ծայրի լայնությունից ավելի փոքր լայնություն:

35. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ նշված սեզմենտներից յուրաքանչյուրն ունի գազաթներ, որոնց ամրացված են նշված ճկուն օղակները, նշված ճկուն

օղակներն ունեն առաջին ծայր եւ երկրորդ ծայր, նշված ծոման տիրույթը գտնվում է նշված առաջին ծայրի եւ նշված երկրորդ ծայրի միջև, նշված ծոման տիրույթն ունի ավելի փոքր լայնություն, քան նշված սեզմենտների նշված գազաթների լայնությունն է, որոնց միանում են նշված առաջին ծայրը եւ նշված երկրորդ ծայրը:

36. Ստեփանոս ըստ 21-րդ, 22-րդ, 23-րդ կամ 24-րդ կետի. *Կարբեքի մասին Է* նրանով, որ երկայնական անցքում գտնվող բալոնի նկատմամբ սեզմենտները չունեն պտտական շեղում կատարելու հնարավորություն, երբ բալոնի օգնությամբ ստեփանոս ընդարձակվում է:

37. Ընդարձակելի հողավոր ստեփանոս, որն ունի երկայնական առանցք եւ մակերեսներում առանցք, էապես խողովակաձեւ եւ էապես կոշտ բազմաթիվ սեզմենտներ, որոնք որոշում են երկայնական անցք, եւ հարեւան սեզմենտները միացնող ճկուն միացնող տարր, որն ունի բազմաթիվ ճկուն օղակներ. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ճկուն օղակներից յուրաքանչյուրն ունի առաջին ու երկրորդ մասեր, նրանց միջև գտնվող ծոման տիրույթ եւ ծայրային կետեր, որոնցով նրանք միացված են սեզմենտներին, նշված ծայրային կետերը էապես մեկ գծով են դասավորված նշված երկայնական անցքի հետ, ընդ որում ճկուն օղակներն այնպես են հարմարեցված, որ էապես փոխհատուցում են սեզմենտների կարճանալու հակումը, երբ ստեփանոս ընդարձակվում է երկայնական անցքի մեջ փչող բալոնի օգնությամբ:

38. Ընդարձակելի հողավոր ստեփանոս, որն ունի երկայնական առանցք եւ մակերեսներում առանցք, էապես խողովակաձեւ եւ էապես կոշտ բազմաթիվ սեզմենտներ, որոնք որոշում են երկայնական անցք, եւ հարեւան սեզմենտները միացնող ճկուն միացնող տարր, որն ունի բազմաթիվ ճկուն օղակներ. *Կարբեքի մասին Է* նրանով, որ օղակներից յուրաքանչյուրն ունի առաջին ու երկրորդ մասեր, նրանց միջև գտնվող ծոման տիրույթ եւ ծայրային կետեր, որոնք էապես մեկ գծով են դասավորված նշված երկայնական անցքի հետ, ընդ որում օղակների եւ սեզմենտների հողակապում ուժի էապես ոչ մի բաղադրիչ չի գործում օղակներից ստեփանոսի մակերեսներում առանցքի ուղղությամբ, ինչպես նաեւ օղակներից երկայնական անցքի նկատմամբ շառավղային ուղղությամբ, երբ ստեփանոս ընդարձակվում է:

39. Ընդարձակվող հողավոր ստեփանոս, որն ունի երկայնական առանցք եւ մակերեսներում առանցք, էապես խողովակաձեւ եւ էապես կոշտ բազմաթիվ սեզմենտներ, որոնք որոշում են երկայնական անցք, եւ սեզմենտները միացնող ճկուն օղակներով միացնող տարր. *Կարբեքի մասին Է* նրանով, որ ճկուն օղակներից յուրաքանչյուրն ունի առաջին եւ երկրորդ մասեր, որոնց միջև գտնվում է ծոման տիրույթ, օղակներն ունեն ստեփանոսի երկայնական անցքի մեջ

կամ նրանից դուրս ցցվելուն չձգտելու հասկություն, երբ ստեղծվում ընդարձակվում կամ ճկվում է երկայնական անցքի մեջ փշովի բալոնի օգնությամբ:

40. Ընդարձակելի հողավոր ստեղծում, որն ունի երկայնական առանցք եւ մակերեսութամբ առանցք, էապես խողովակաձեւ եւ էապես կոշտ բազմաթիվ սեգմենտներ, որոնք որոշում են երկայնական անցք, եւ հարեւան սեգմենտները միացնող ճկուն միացնող տարր, որն ունի բազմաթիվ ճկուն օղակներ. *Կատարելի* է նրանով, որ օղակներից յուրաքանչյուրն ունի առաջին ու երկրորդ մասեր, նրանց միջեւ գտնվող ծռման տիրույթ եւ առաջին ու երկրորդ ծայրեր, որոնց միջեւ գտնվում է ծռման տիրույթը, ծռման տիրույթի լայնությունն ավելի փոքր է, քան նշված առաջին եւ երկրորդ ծայրերի լայնությունը, սեգմենտներից յուրաքանչյուրն ունի գազաթներ, որոնց հետ կապված են ճկուն օղակները, ընդ որում նշված ծռման տիրույթն ունի ավելի փոքր լայնություն, քան սեգմենտների նշված գազաթների լայնությունն է, որոնց միանում են օղակների առաջին եւ երկրորդ ծայրերը, նշված սեգմենտները երկայնական անցքում գտնվող բալոնի նկատմամբ չունեն պտտական շեղում կատարելու հնարավորություն, երբ բալոնի օգնությամբ ստեղծում ընդարձակվում է:

- (51)<sup>6</sup> **A61F2/06** (11) **803** (13) **A2**  
**A61M29/02**
- (21) 97099 (22) 30.10.1997
- (31) 08/742,422 (32) 30.10.1996 (33) US
- (72) Յա. Ռիխտեր, Ի. Յարոն, IL
- (71) (73) Մեդիմոլ ԼԹԳ., IL
- (74) Հ. Գավթյան
- (54) **Ստեղծում, դրա պատրաստման թերթ եւ ստեղծող պատրաստման եղանակ**

(57) 1. **Ստեղծողի պատրաստման եղանակ**, ըստ որի մետաղի հարթ կտորի վրա կտրում են ստեղծողի բազմաթիվ նախշանկարներ. *Կատարելի* է նրանով, որ նշված նախշանկարներից յուրաքանչյուրն ունի առաջին երկար կողմ եւ երկրորդ երկար կողմ, առաջին երկար կողմն ունի կառչման գոգերի բազմաթիվ զույգեր, երկրորդ երկար կողմն ունի կառչման ելուստների բազմաթիվ զույգեր, նշված կառչման գոգերի զույգերը եւ նշված կառչման ելուստները միմյանց նկատմամբ էապես հակադիր են տեղադրված, նշված կառչման գոգերի զույգերից յուրաքանչյուրն ունի առաջին կառչման գոգ եւ երկրորդ կառչման գոգ, նշված կառչման գոգերն այնպես են չափավորված եւ տեղաբաշխված, որ ընդունում եւ կառչում են կառչման ելուստներին, երբ նշված նախշանկարը դեֆորմացվում եւ ոլորվում է խողովակի ձեւով, նշված կառչման գոգերից յուրաքանչյուր զույգն ունի կամուրջ, որը գտնվում է նշված առաջին կառչման գոգի եւ նշված երկրորդ կառչման գոգի միջեւ, նշված հարթ

մետաղաթերթի վրա ուղիղ գծով դասավորում են բազմաթիվ անցքեր, նշված նախշանկարը խողովակի ձեւով դեֆորմացնում են այնպես, որ կառչման գոգերի նշված զույգերը կառչում են կառչման ելուստների նշված զույգերին, կտրում են նշված կամուրջը, նշված կառչման գոգերն ամրացնում են այն կառչման ելուստներին, որոնց կառչում են՝ նշված ընդարձակվող ստեղծողի ձեւավորման համար:

2. Եղանակն ըստ 1-ին կետի. *Կատարելի* է նրանով, որ նշված թերթի բազմաթիվ անցքերը դասավորում են մեկ գծով:

3. Եղանակն ըստ 1-ին կետի. *Կատարելի* է նրանով, որ կամուրջների կտրումն իրականացնում են լազերի կիրառմամբ:

4. Եղանակն ըստ 1-ին կետի. *Կատարելի* է նրանով, որ նշված կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են գողման եղանակով:

5. Եղանակն ըստ 4-րդ կետի. *Կատարելի* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են գողման կարի կիրառմամբ, որը ճյուղավորվում է նշված կառչման գոգերի եւ կառչման ելուստների միմյանց հպման կետից:

6. Եղանակն ըստ 5-րդ կետի. *Կատարելի* է նրանով, որ նշված գողման կարը մոտավորապես 0,01մմ-ով հեռու է ճյուղավորվում այն կետից, որտեղ նշված կառչման գոգերը եւ կառչման ելուստներն իրար են հպվում:

7. Եղանակն ըստ 4-րդ կետի. *Կատարելի* է նրանով, որ նշված գողումը կետային է:

8. Եղանակն ըստ 7-րդ կետի. *Կատարելի* է նրանով, որ կիրառում են բազմաթիվ կետային գողումներ:

9. Եղանակն ըստ 8-րդ կետի. *Կատարելի* է նրանով, որ կիրառում են 5 կետային գողումներ:

10. Եղանակն ըստ 1-ին կետի. *Կատարելի* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են կաչուն նյութի միջոցով:

11. Եղանակն ըստ 1-ին կետի. *Կատարելի* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են մեխանիկական տարրի միջոցով:

12. **Ստեղծողի պատրաստման եղանակ**, ըստ որի մետաղի հարթ կտորի վրա կտրում են ստեղծողի բազմաթիվ նախշանկարներ. *Կատարելի* է նրանով, որ նախշանկարներից յուրաքանչյուրն ունի ճկուն միացված բազմաթիվ բջիջներ, որոնցից յուրաքանչյուրն ունի առաջին անդամ, որն ունի առաջին եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, երկրորդ անդամ, որն ունի առաջին եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, երրորդ անդամ, որն ունի առաջին եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, չորրորդ անդամ, որն ունի առաջին եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ,

առաջին հանգույց, որը որոշում է նշված առաջին անդամի առաջին վերջավորությամբ եւ նշված երկրորդ անդամի առաջին վերջավորությամբ կազմված առաջին անկյունը, երկրորդ հանգույց, որը որոշում է նշված երրորդ անդամի երկրորդ վերջավորությամբ եւ նշված չորրորդ անդամի երկրորդ վերջավորությամբ կազմված երկրորդ անկյունը եւ որը հակադիր է դասավորված նշված առաջին հանգույցին, առաջին ճկուն փոխհատուցող անդամ կամ ճկուն օղակ, որն ունի նշված առաջին անդամի եւ նշված երրորդ անդամի միջեւ գտնվող առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն, նշված առաջին ճկուն փոխհատուցող օղակի կամ ճկուն օղակի առաջին վերջավորություն, որը հաղորդակցվում է նշված առաջին անդամի նշված երկրորդ վերջավորության հետ եւ նշված առաջին ճկուն փոխհատուցող անդամի կամ ճկուն օղակի նշված երկրորդ վերջավորություն, որը հաղորդակցվում է նշված երրորդ անդամի նշված առաջին վերջավորության հետ, նշված առաջին եւ նշված երկրորդ վերջավորությունները գտնվում են միմյանցից փոփոխական երկայնական հեռավորության վրա, երկրորդ ճկուն փոխհատուցող անդամ կամ ճկուն օղակ, որն ունի նշված երկրորդ անդամի եւ նշված չորրորդ անդամի միջեւ գտնվող առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն, նշված երկրորդ ճկուն փոխհատուցող անդամի կամ ճկուն օղակի առաջին վերջավորությունը հաղորդակցվում է նշված երկրորդ անդամի նշված երկրորդ վերջավորության հետ, եւ նշված երկրորդ ճկուն փոխհատուցող օղակի կամ ճկուն օղակի երկրորդ վերջավորությունը հաղորդակցվում է նշված չորրորդ օղակի առաջին վերջավորության հետ, նշված առաջին եւ երկրորդ վերջավորությունները գտնվում են միմյանցից փոփոխական երկայնական հեռավորության վրա, նշված առաջին եւ երկրորդ ճկուն փոխհատուցող անդամները կամ ճկուն օղակներն այնպես են տեղաբաշխված, որ երբ ստենտը ընդարձակվում է, նշված առաջին եւ նշված երկրորդ ճկուն փոխհատուցող անդամների կամ ճկուն օղակների միջեւ հեռավորությունը մեծանում է, եւ նշված առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ անդամների երկայնական բաղադրիչները փոքրանում են, մինչդեռ նշված առաջին, նշված երկրորդ հանգույցները միմյանց նկատմամբ ընդհանրապես մնում են հակադիր, նշված առաջին եւ նշված երկրորդ ճկուն փոխհատուցող անդամների կամ ճկուն օղակների վերջավորություններն այնպես են բացվում, որ մեծացնում են նշված առաջին փոխհատուցող անդամի կամ ճկուն օղակի

նշված առաջին եւ նշված երկրորդ վերջավորությունների միջեւ փոփոխական երկայնական հեռավորությունը եւ այնպես, որ մեծացնում են նշված երկրորդ ճկուն փոխհատուցող անդամի կամ ճկուն օղակի նշված առաջին եւ երկրորդ վերջավորությունների միջեւ փոփոխական երկայնական հեռավորությունը, այնպես, որ փոխհատուցում են նշված առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ անդամների երկայնական բաղադրիչի փոքրացումը եւ էապես նվազեցնում են նշված ստենտի կարճացումը նրա ընդարձակման ժամանակ, ստենտի բազմաթիվ նախշանկարներից յուրաքանչյուրն ունի առաջին երկար կողմ եւ երկրորդ երկար կողմ, նշված առաջին երկար կողմն ունի կառչման գոգերի բազմաթիվ զույգեր, նշված երկրորդ երկար կողմն ունի կառչման ելուստների բազմաթիվ զույգեր, կառչման գոգերի զույգերը եւ կառչման ելուստների զույգերը տեղաբաշխված են միմյանց նկատմամբ էականորեն հակադիր, նշված կառչման գոգերի զույգերից յուրաքանչյուրն ունի առաջին կառչման գոգ եւ երկրորդ կառչման գոգ, նշված կառչման գոգերը չափավորված եւ տեղաբաշխված են այնպես, որ ընդունեն եւ կառչվեն նշված կառչման ելուստների հետ, երբ նշված նախշանկարը դեֆորմացվում եւ ոլորվում է խողովակի ձեւով, նշված կառչման գոգերի զույգերից յուրաքանչյուրն ունի կամուրջ, որը գտնվում է նշված առաջին կառչման գոգի եւ նշված երկրորդ կառչման գոգի միջեւ, նշված նախշանկարի դեֆորմացումը խողովակի ձեւով կատարում են այնպես, որ կառչման գոգերի նշված զույգերը կառչում են կառչման ելուստների նշված զույգերի հետ, կտրում են նշված կամուրջները, նշված կառչման գոգերն ամրացնում են այն կառչման ելուստներին, որոնց հետ այն կառչած է՝ նշված ընդարձակելի ստենտի առաջացման համար:

13. Եղանակն ըստ 12-րդ կետի. *լրարբերվում է* նրանով, որ նշված հարթ մետաղաթերթի անցքերը դասավորում են մեկ գծով:

14. Եղանակն ըստ 12-րդ կետի. *լրարբերվում է* նրանով, որ նշված առաջին հանգույցը, նշված երկրորդ հանգույցը, նշված առաջին փոխհատուցող անդամը եւ նշված երկրորդ փոխհատուցող անդամն արվում են ավելի լայն, քան նշված առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ անդամները:

15. Եղանակն ըստ 14-րդ կետի. *լրարբերվում է* նրանով, որ նշված առաջին եւ նշված երկրորդ փոխհատուցող անդամներն արվում են ավելի լայն, քան նշված առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ անդամները, եւ նշված առաջին եւ նշված երկրորդ հանգույցներն ավելի լայն են, քան նշված առաջին եւ նշված երկրորդ փոխհատուցող անդամները:

16. Եղանակն ըստ 15-րդ կետի. *լրարբերվում է* նրանով, որ նշված առաջին եւ նշված երկրորդ հանգույցներն ունեն մոտավորապես 40%-ով ավելի մեծ լայնություն, քան նշված առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ անդամների լայնությունն է, եւ նշված առաջին եւ նշված երկրորդ փոխհատուցող անդամ-

ներն ունեն մոտավորապես 20%-ով ավելի մեծ լայնություն, քան նշված առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ անդամների լայնությունն է:

17. Եղանակն ըստ 12-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կամուրջների կտրումն իրականացնում են լազերի կիրառմամբ:

18. Եղանակն ըստ 12-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են զոդման եղանակով:

19. Եղանակն ըստ 18-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են զոդման կարի օգտագործմամբ, որը ճյուղավորվում է նշված կառչման գոգերի եւ նշված կառչման ելուստների միմյանց հպման կետից:

20. Եղանակն ըստ 19-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ նշված զոդման կարը մոտավորապես 0,01մմ հեռու է ճյուղավորվում այն կետից, որտեղ նշված կառչման գոգերը եւ նշված կառչման ելուստները միմյանց են հպվում:

21. Եղանակն ըստ 18-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ նշված զոդումը կետային է:

22. Եղանակն ըստ 21-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կիրառում են բազմաթիվ կետային զոդումներ:

23. Եղանակն ըստ 22-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կիրառում են 5 կետային զոդումներ:

24. Եղանակն ըստ 12-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են կաշուն նյութի օգտագործմամբ:

25. Եղանակն ըստ 12-րդ կետի. *փարթերվում* է նրանով, որ կառչման գոգերի ամրացումը կառչման ելուստներին իրականացնում են մեխանման տարրի օգտագործմամբ:

26. Երկայնական խոռոչ ունեցող **ստենտի պատրաստման թերթ**, որն իրենից ներկայացնում է ստենտի բազմաթիվ նախշանկարներով հարթ մետաղի կտոր. *փարթերվում* է նրանով, որ նշված նախշանկարներից յուրաքանչյուրն ունի առաջին երկար կողմ եւ երկրորդ երկար կողմ, նշված առաջին երկար կողմն ունի կառչման գոգերի բազմաթիվ զույգեր, նշված երկրորդ երկար կողմն ունի կառչման ելուստների բազմաթիվ զույգեր, կառչման գոգերի զույգերը եւ կառչման ելուստների զույգերը միմյանց նկատմամբ էապես հակադիր են տեղաբաշխված, նշված կառչման գոգերի զույգերից յուրաքանչյուրն ունի առաջին կառչման գոգ եւ երկրորդ կառչման գոգ, նշված կառչման գոգերը չափավորված եւ տեղաբաշխված են այնպես, որ ընդունեն եւ կառչեն նշված կառչման ելուստներին, երբ նախշանկարը դեֆորմացվում եւ ոլորվում է խողովակի ձեռով, նշված կառչման գոգերի զույգերից յուրաքանչյուրն ունի կամուրջ, որը գտնվում է նշված առաջին կառչման գոգի եւ նշված երկրորդ կառչման գոգի միջեւ:

27. Թերթն ըստ 26-րդ կետի. *փարթերվում* է

ներանով, որ լրացուցիչ ունի մեկ գծով դասավորված բազմաթիվ անցքեր, որոնք տեղաբաշխված են նշված թերթի վրա:

28. Երկայնական խոռոչ ունեցող **ստենտի պատրաստման թերթ**, որն իրենից ներկայացնում է ստենտի բազմաթիվ նախշանկարներով հարթ մետաղի կտոր. *փարթերվում* է նրանով, որ նշված նախշանկարներից յուրաքանչյուրն ունի ճկուն միացված բազմաթիվ բջիջներ, որոնցից յուրաքանչյուրն ունի առաջին անդամ, որն ունի առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, երկրորդ անդամ, որն ունի առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, երրորդ անդամ, որն ունի առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, չորրորդ անդամ, որն ունի առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն ունեցող երկայնական բաղադրիչ, առաջին հանգույց, որը որոշում է նշված առաջին անդամի առաջին վերջավորությամբ եւ նշված երկրորդ անդամի առաջին վերջավորությամբ կազմված առաջին անկյունը, երկրորդ հանգույց, որը որոշում է նշված երկրորդ անդամի երկրորդ վերջավորությամբ եւ նշված չորրորդ անդամի երկրորդ վերջավորությամբ կազմված երկրորդ անկյունը, եւ որը հակադիր է դասավորված նշված առաջին հանգույցին, առաջին փոխհատուցող անդամ կամ ճկուն օղակ, որն ունի նշված առաջին անդամի եւ նշված երկրորդ անդամի միջեւ գտնվող առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն, նշված առաջին ճկուն փոխհատուցող անդամի առաջին վերջավորությունը կամ ճկուն օղակը հաղորդակցվում է նշված առաջին անդամի եւ նշված երկրորդ վերջավորության հետ, եւ նշված առաջին ճկուն փոխհատուցող անդամի կամ ճկուն օղակի երկրորդ վերջավորությունը հաղորդակցվում է նշված երրորդ անդամի նշված առաջին վերջավորության հետ, նշված առաջին եւ նշված երկրորդ վերջավորությունները գտնվում են միմյանցից փոփոխական երկայնական հեռավորության վրա, երկրորդ ճկուն փոխհատուցող անդամ կամ ճկուն օղակ, որն ունի առաջին վերջավորություն եւ երկրորդ վերջավորություն, որոնք գտնվում են նշված երկրորդ անդամի եւ նշված չորրորդ անդամի միջեւ, նշված երկրորդ ճկուն փոխհատուցող անդամի կամ ճկուն օղակի առաջին վերջավորությունը հաղորդակցվում է նշված երկրորդ անդամի երկրորդ վերջավորության հետ, եւ նշված երկրորդ վերջավորությունը հաղորդակցվում է նշված չորրորդ անդամի նշված առաջին վերջավորության հետ, նշված առաջին եւ նշված երկրորդ վերջավորությունները գտնվում են միմյանցից փոփոխական երկայնական հեռավորության վրա, նշված առաջին եւ նշված երկրորդ ճկուն փոխհատուցող անդամները կամ ճկուն օղակներն առանձին-առանձին ընդարձակելի եւ սեղմելի են, երբ նշված ստենտը կորագիծ ուղղությամբ ծռելով հեռացնում են նշված անցքի երկայ-

